ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 197-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԴՍԵՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի և «Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի զեկուցագիրը՝

Որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյան «Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» և «Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» և «Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2024 թվականի մայիսի
15 -ին կայանալիք մրցույթներն անցկացնելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի անդամներ՝ Սուրեն Վաչագանի Թումանյան -ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու անդամ,համայնքի ղեկավար,

Գոհար Խաչիկյան -ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու անդամ,

Վարդան Սևակի Հովհաննիսյան - ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ ՀԳՄ

հարցերով վարչության ՀԳՄՏՍԳ համակարգման բաժնի պետ,

Անահիտ Խաչատուրի Բարոյան - ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ,

Երմոնյա Ժորայի Մայիլյան- «Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց»

համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,

հանձնաժողովի քարտուղար՝ Ռուզաննա Գուրգենի Շահվերդյան -Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. մայիսի 13
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 198-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 1-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Աննա Օսիկի Հովհաննիսյանի /մուտք՝ 22.04.2024թ. թիվ 239/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Բավարարել Աննա Օսիկի Հովհաննիսյանի դիմումը և ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ, 4 հողամաս հասցեում (ծածկագիր՝ 06-035-0108-0115, վկայական՝ 05102023-06-0058) 63 կՎԱ ՀՏԵ-ի տեղադրման և 10կՎ ՕԳՊ-ի կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար տալ շինարարության թույլտվություն:

2. Շինարարական աշխատանքները սկսել համայնքապետարանի կողմից տրամադրված շինարարության թույլտվության առկայության դեպքում:

3. Համայնքապետարանի բյուջե վճարել 15000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. մայիսի 14
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 199-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ /ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596 որոշումով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 22.11.2023թ. թիվ 85-Ն որոշումը և Աննա Օսիկի Հովհաննիսյանի /մուտք՝ 10.05.2024թ. թիվ 274 / դիմումը՝

Որոշում եմ.

1. Բավարարել Աննա Օսիկի Հովհաննիսյանի դիմումը և ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Դսեղ, 3 հողամաս հասցեում գտնվող նոր կառուցված քոթեջների համար տրամադրել ավարտականակտ(շահագործման թույլտվություն):

2. Շինության ավարտական ակտ (շահագործման թույլտվություն) տրամադրելու համար համայնքապետարանի հաշվեհամարին մուծել 10000 դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. մայիսի 14
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 200-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.02.2024Թ. N 47-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 26/04/2024 թ. <<Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին >> Կ- 26042024-06-0103 որոշումը՝ Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի ղեկավարի 2024թ. փետրվարի 6-ի <<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՀՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 47-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Որոշման 5-րդ կետը փոփոխել և կարդալ հետևյալ խմբագրությամբ՝ <<Վերականգնել և ճանաչել Համլետ Քառյանի /ծնված՝02.01.1955թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Ահնիձոր,06-012-0108-0002 ծածկագրում գտնվող 4.53356 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ>>:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 06.02.2024թ. N 47-Ա որոշման 5-րդ կետի պահանջները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. մայիսի 14
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 201-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2024թ. ապրիլի 26-ի N 37-Ա և N 38-Ա որոշումները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշումը՝
Որոշում եմ.

1. 2024 թվականի հունիսի 18- ին ժամը 11^{00}-ին հայտարարել Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերի աճուրդ-վաճառք:
Լոտ 1. 06-004-0015-0057 կադաստրային ծածկագրի 0,02177 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
Մեկնարկային գին սահմանել 460000 ՀՀ դրամ:
Լոտ 2. 06-004-0255-0022 կադաստրային ծածկագրի 0,059981 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս:
Մեկնարկային գին սահմանել 650000 ՀՀ դրամ:
2. Հողամասերի աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով, մասնակցության վճարը՝ 10000 ՀՀ դրամ, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով: Նշված հողամասերի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան:Աճուրդին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն: Հայտերն ընդունվում են Թումանյանի համայնքապետարանում երկուշաբթիից-ուրբաթ, ժամը՝ 09^{00}-ից մինչև 18^{00}: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:
3. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև անշարժ գույքերի օտարման դեպքում չեն սահմանափակվում այլ անձանց իրավունքները և չեն խախտվում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
4.Համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի և այլ հիմնական միջոցների աճուրդային կարգով օտարող հանձնաժողովին հանձնարարել նախատեսվող աճուրդի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Առավոտ» օրաթերթում,հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում ինչպես նաև հայտարարությունը տեղադրել համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. մայիսի 14
ք.Թումանյան